

ՀԱՅ ԱՆԳԻՐ ԳԱՆՁԵՐԵՆ

Լ Է Ի Օ ՈՒ Պ Ա Պ Է - Ֆ Ռ Ը Ն Կ

Երեւմտաց կողմը՝ թաղաւոր ծը կար։ Անոր լաճը՝ զիշեր քունին ձէջ երազ ձը տեսաւ, — Բրեւ-
ւոց թաղաւորի աղջկան հետ շարքաւ խմեց, ծառ-
նիկները իրարու հետ փոխեցին։

Արթնցաւ տեսաւ որ երազակա՛ն բան է...։

Բայց այն ժամանակնէ՛րը...՝ երբ երազ տես-
նէին՝ լրջո՛ւց կը կատարուէր։

Տեսաւ որ իր ծառնիկը լրջո՛ւց փոխուէր է...։

Ելաւ հետ-լուստն իր հօրն ըսաւ, — Ինձի
հրաճան ըրէ՛՜ ես երթամ աշխարհ պտըտիմ։ Դուն
ծերացեր ես, ես երթամ՝ աշխրբի բաները ի՛նձ
դամ նստիմ քու տեղ։

Ըսաւ, — Որդի՛, կ'երթաս՝ աղէ՛կ...։ Տիայն
թէ ընկեր ծը տանիս քեզ հետ։ — Կառնես
այդ ծառան՝ կ'երթաս քաղաքէն դուրս՝ աղբիւր ծը
կայ, կը նստիք վեր՝ աղբիւրին, այն ծարղուն կ'ը-
սես որ, — Մա՛րդ, հաց ծ՝ հա՛ն ուտենք։ Տեսար
որ հացը հանեց՝ շատն տուաւ իրեն, քիչը քեզի
տուաւ՝ այն ծարղը մի՛ տանի՛ր հետդ, այն ծարղը
գէշ ծարղ է։ Ձե՛, թէ որ շատը քեզի տուաւ՝ քիչն
տուաւ իրեն՝ այն ծարղը տա՛ր հետդ...։

Տղան ելաւ գնաց քաղքի ձէջ կան եկաւ, ձէկ
ծարղ ծը դէմն ելաւ. ըսաւ, — Ա՛յ ծարղ, դուն չե՛ս
դար ինձ հետ, քեզի վարձք կուտամ, երթանք աշ-
խարք ծան գանք...։

Ըսաւ, — Կուգա՛ձ, ինչո՞ւ պիտի չգամ։

Ըսաւ՝ Որ կուգաս՝ վաղը այս պահուս այստեղ
կենաս՝ ես դամ երթանք։

Մէկալ օրը՝ արքայորդին ելաւ իր ձին հեծաւ՝
գնաց, տեսաւ այդ ծարղը հոն կեցեր է։

Ելան գնացին ձինչեւ այդ աղբիւրին վրան։

Ըսաւ, — Ա՛յ ծարղ, հաց ծը հա՛ն կիտէ՛, կէս

մի՛նծի տուր, կէս ծը քեզի, հե՛տ ուտենք՝ հե՛տ
երթանք։

Մարդը հացը հանեց՝ ըսաւ (ժողովի), — Էսիկ
թաղաւորի տղայ է, ե՛րբ է այնքան շատ հաց կէ-
րեր...։ Քիչ բան ծը հաց տուաւ անոր ձեռք, ձէ-
կալը բռնեց իր ձեռքը, կ'ուտեն՝ կ'երթան։

Ելան քիչ բան ծը դնացին, թաղաւորի տղան
ձին դարձուց։ Այդ ծարղն ըսաւ՝ Ինչո՞ւ դարձար...։
Ըսաւ, — Բան մ'ընկաւ իմ միտ...։ ա՛յ չենք երթար,
դառնամ երթամ իմ տունը...։

Ելան դարձան՝ ետ եկան։

Մէկալ օրը ելաւ գնաց՝ նորէն այգալիսի ծարղ
ծը դէժը եկաւ, տարաւ հետ. նորէ՛ն այգալէս շատն
տուաւ իրեն, քիչը տուաւ թաղաւորի տղուն. դար-
ձան ետ եկան։

Մէկալ օրն ալ ելաւ՝ քաղաքը ծան եկաւ, տե-
սաւ անդիէն տղայ ծը եկաւ, ըսաւ՝ Երանի՛ թէ այս
տղան իմ հօր ըսածի պէս ըլլար, ես զինքը հետս
տանէի ընկեր։

Ինպէ՛ս տեսակուն (տեսքոս) տղայ մ'էր...։

Ըսաւ, — Տօ՛ տղայ, դուն չե՛ս ի դար ինձի
հետ, ամսական երկու սկի տամ քեզ, երթանք աշ-
խարհ կան գանք։

Տղան ըսաւ, — Ինչո՞ւ չգամ...։ Կուգա՛ձ։

Է՛, ըսաւ, — Թէ որ կուգաս՝ վաղը այս ատեն
պատրաստ եղիր՝ եկուր հոս, ես կուգամ՝ երթանք։

Մէկալ օրը թաղաւորի տղան գնաց տեսաւ որ
ծարղը պատրաստուէր կեցեր է հոն։

Ելան գնացին ձինչեւ այն աղբիւրը, թաղաւորի
տղան ըսաւ, — Ա՛յ ծարղ, հաց ծը հա՛ն կիտէ՛՝ կէս

ձինձի, կէս ծը քեզի, հետ ուտենք՝ հետ ճամբայ երթանք:

Հացը հանեց՝ քիչ բան ծը կիսեց առաւ իր ձեռքը, ձեկալ շատը տուաւ թագաւորի տղուն:

Թագաւորի տղան ըսաւ, — Տա՛ տղայ, դուն այսքան հաց կուտաս ինձի՝ ես ի՞նչ պիտի ընեմ:

Ըսաւ, — Զանր՛մ, դուն թագաւորական տղայ ես, քեզի ժամով-պահով հաց չե՛ն տուած, ե՛րբ քու հոգիդ ուզեր է, եւր հաց ես կերեր. ի՛նչ կ'ուտես կեր՝ ձեկալ կտորը դի՛ր քու զրպանդ, երբ սիրտդ ուզէ՝ կ'ուտես:

Թագաւորի տղան շատ ուրախացաւ, իր ծնոքին ձեջ ըսաւ՝ Այս ճարդն ի՞նչ հօր ըսած ճարդն է, ես ասիկ պիտի ասնիմ ինձ հետ:

Ըսաւ՝ Տո՛ տղայ, քու անունն ի՛նչ է...:

Ըսաւ՝ Իձ անունն Լէւօ է:

Ելան ընկան ճամբայ՝ շատ ու քիչ՝ Աստուած գիտէ, — գնացին, գնացին, ձեկ կապան ծը հասան՝ գիշերը վրայ տուաւ, չէին կրնար առաջ երթալ:

Թագաւորի տղան ըսաւ՝ Լեւօ՛ն, ի՛նչ ընենք, չենք կրնար առաջ երթալ:

Ըսաւ՝ Ինչպէս ընենք, գիշեր է. ելնենք ճամբէն դուրս, ճեղ տանք քարի ձը տակ՝ ձինչեւ լուսնայ, երթանք:

Ելան քարին տակը, ձին կապեցին հոն, նստան:

Թագաւորի տղան առաւ քնանալ. Լեւոն ըսաւ՝ ես ի՛նչպէս ընեմ, ես քնի՞մ ինքը եթէ արթնայ, պիտի ըսէ՝ Այս ճարդ ի՛նչ տեսակ ծառայ է, պառկեր քներ է: Մնած արթուն, ձինչեւ լուսը բացուի:

Մնաց ձինչեւ կէս գիշերին: Կէս գիշերին Լէւօ տեսաւ որ լո՛յս ծծը զարկաւ այդ կապանին ձեջ. շա՛տ վախցաւ զարդնդաւ... Քարին տակէն դուրս ելաւ, ճառձեց ըսաւ՝ Արդեօք այս լուսնա՞կ է, լուսնա՞կ չէ...: Ածիսը դեռ երկուքը, լուսնակ չկայ, տակի ի՛նչ լոյս է...:

Տեսաւ որ ձեկ ճարդ ծը կանգնէր է ձե՛կ սարի գլխուն, ձեկ ճարդ ծ'ալ կանգնէր է ձեկա՛լ սարի գլխուն, իրարու դիմաց, չըսե՛ս ձեկը Սուրբ Գէորգն է, ձեկը Սուրբ Սարգիս, — տա՛յ ներկաներուն ձուրաւ...:

Սուրբ Գէորգ հարցուց ըսաւ՝ Սուրբ Սարգիս, ատոնք ի՞նչ ճարդ են այդ ձորի ձեջ...:

Սուրբ Սարգիսն ըսաւ՝ Անիկ Արեւմտոյց թագաւորի տղան է, ձեկալն ալ անոր ճառան է:

Ըսաւ՝ Ան ո՛ւր կ'երթան...:

Ըսաւ՝ Անիկ Արեւելոյց թագաւորի աղջկան հետ գիշեր երազի ձեջ շաբաթ է խմեր, ճառանկներ փոխած են իրարու հետ, անոր համար կ'երթայ...: Բայց այս պատճառիւն ո՛վ որ լսէ եւ իրարու պատճէ՛ քար կը կարի...:

Մնաց ձինչեւ լուսուն՝ ելան գնացին. շատ ու քիչ՝ Աստուած գիտէ, քանի ծը ժա անակ գնացին, գնացին ելան Արեւելոյց թագաւորի քաղաքը:

Թագաւորի տղան հարցուց ըսաւ՝ Լէւօ՛, այդ եօք ճենք ո՞ւր երթանք՝ գիշերը էվրենք՝ (1) ձինչեւ լուսուն:

Ըսաւ՝ Թագաւորի՛ տղայ, քու ձիւ սանձը թող, ձին ո՛րտեղը կանգնի՝ այնտեղ կը մնանք:

Սանձը թողուց, գնացին ձեկ պառաւի ծը դուռը՝ ձին կանգ առաւ:

Կանչեցին պառուին՝ ըսին, — Մաճի՛կ, տեղ ծը չկա՞յ՝ տաս ճեզի, գիշերս էվրենքնէք, հեալուսուն ելնենք երթանք:

Մաճիկն ըսաւ՝ Տեղ չկայ: Այնքան ծը սեղ կայ՝ որ հազիւ ի՞նչ ճախրակն եմ գրեր:

Ըսաւ՝ Մաճի՛կ, ա՛ռ քեզի հինգ ոսկի, գիշերս ձեղ էվրենքուր՝ ձինչեւ առտուն կ'երնենք կ'երկանք:

Մաճիկ որ ոսկիք տեսաւ՝ ճախրակիւր չարկաւ գետին՝ կոտրեց. ըսաւ՝ Ես հարս էի եղեր՝ ձինչեւ հի՞մա ճախրակ կը ծանէի, ձե՛կ ոսկի ալ չէի տեսեր...:

Մարդերը ներս առաւ: Զըսե՛ս պառու տունէն ներս տուն ծ'ալ կար...: Տարաւ ձին կապեց, ճարգերը տարաւ նստեցուց:

Թագաւորի տղան նայեցաւ որ պառու տունը թո՛ւ բան ծը չկա՛յ...: ո՛չ ծածկոց, ո՛չ ձեկ բան:

Ըսաւ՝ Մաճի՛կ, ապա գիշերը ո՛ւր կը քնես, ինչի՛ ձեջ կը քնես...:

Ըսաւ՝ Իձ վերձակը այդ ձորին է. ցերեկ կը նստիմ վրան՝ ճախրակ կը ծանեմ, գիշեր՝ կը քնեմ վրան:

— Ա՛ռ, ըսաւ, մաճի՛կ, քեզի հինգ վեց ոսկի, տա՛ր շուկան, ձեկ ձեռք ծ'անկողին բեր ճեղ երեքիս, քիչ ծ'ալ կերակուր-բան բեր՝ ուտենք, խմենք:

Պառաւ գնաց բերաւ այդ բաները, կերան, խմեցին:

Թագաւորի տղան հարցուց, ըսաւ՝ Մաճի՛կ, արդեօք ի՛նչ զրոյց կայ այս քաղաք...:

(1) Էվրենք՝ զիւրեղ:

Մաճիկն ըստւ, — Որդի՛, դուք բարի Հիւր էք, պառկեցէք քնէք ձեզ Համար, Հետ լուսուն՝ բարով ելէք գնացէք...:

Ան ալ ըստւ, — Ըղէ՛կ, ծածի՛կ, ձենք ելանք գնացի՛նք, ճամբան ճարդ ծը դէ՛մ եկաւ՝ Հարցուց՝ Ո՞ր տեղէն կուգաք, ըսինք՝ ահա՛ն ձենք Արեւելոց թագաւորի քաղաքէն կուգա՛նք, այն ճարդն ալ ձեզի պիտի՛ Հարցնէ ըսէ՛ այն քաղաքի ձէջ ի՞նչ զրոյց կար, ի՞նչ բան ծը կար...: ձենք ի՞նչ ըսենք այդ ճարդուն...: ըսենք բա՛ն ծը չկայ այն քաղաք՝ պիտի ըսէ դուք սուտ կ'ըսէք, դուք այն քաղաքէն չէք ի գար...: պէտք է որ ձենք Հասկնա՛նք:

Մաճիկն ըստւ, — Որդի՛, ի՞նչ պիտի ըսեմ ձեզի...:

Ըսա՛ւ, — Մէկ ժամանակով...՝ ձեր թագաւորի աղջիկը երազով գնացեր էր Արեւմտոց թագաւորի տղուն Հետ, ճառանքներն իրարու Հետ փոխեր են, ձեկզմէկ պիտի առնեն...: Հի՛մա ալ Պապէ-Փռնկի զրկեր է՝ այն աղջիկը կ'ուզէ տանի իր տղուն...: Աղջիկը լուր տուաւ իր Հօրը, ըսաւ՝ Ահա՛ն ես թոյն կը խմեմ կը ձենի՛մ՝ չե՛մ երթար այն տղան առնեմ...: Հայրն ալ ելաւ պատասխան տուաւ Պապէ-Փռնկի թագաւորին թէ՛ Ես ի՛մ աղջիկը չեմ իտար քու լաճուն...: Ան ալ ըստւ՝ Որ դուն չես տար՝ ես ու դուն կուլու պիտի ընենք, թէ կըցայ՝ կը տանի՛մ. թէ չկըցայ՝ չեմ տանի: Պապէ-Փռնկի թագաւորն ելեր իր դօրքը զրկեր է՝ եկեր ձեր քաղքի բոլորը բռներ են, ձէ՛կը չեն թողուր ելնէ դուրս...: կ'ըսէ՛ Ահա՛ն կա՛մ քու աղջիկը պիտի տաս, կա՛մ քու քաղաքն աւերցի...: — ահա՛ ձեր քաղաք այսպէս բռներ կայ...:

Դարձաւ թագաւորի տղան ըստւ, — Մաճի՛կ, այսօր ձենք եկեր ենք ցօ տուն՝ դուն եղեր ես ձեզ ծայր՝ ձենք եղեր ենք քեզ տղայ...: որպէս զի ձեր զազանիքը ձեր ձէջ մնայ...: Թէ կը Հարցնես՝ այն ճարդը որ ծարբար է խմեր Հետը՝ ահա՛ն ես եմ...:

Մաճիկն ալ դարձաւ ըստւ, — Որդի՛, այսքան ինչ բեզնէ աղէկութիւն տեսայ՝ ապա ես կ'եղնե՛մ երբեք ուրիշին կը զրուցեմ...:

Թագաւորի տղան ըստւ, — Ապա դուն ի՞նչպէս պիտի ընես՝ այն աղջիկը տեսնես...:

Մաճիկն ըստւ՝ Ես ի՞նչպէս տեսնեմ...: տարեր են եօթը դուռնով ներս ճացուցեր են, զրա՛ն դրան վրայ ալ երկու ճարդ դռնապան են դրեր, թող չեն իտար՝ ճա՛րդ ճանէ ներս...:

Թագաւորի տղան ալ ըստւ, — Մաճի՛կ, զիւրին է. դուն գնա՛ ըսէ՛ Զիս պալատէն են զրկեր, որ ես այն աղջիկ յորդորեմ երթայ Պապէ-Փռնկի տղան առնէ, ձենք ազատուինք...:

Ըսաւ՝ Ե՛ւ գնա, ա՛ւ բեզ ոսկի ծը, գնա՛ շուկան, քիչ ծը խնձոր ա՛ւ, Հատ ճ՛ալ ճաքուր պնակ ա՛ւ՝ եկուր:

Մաճիկը գնաց բերաւ այդ բաները:

Ան ալ բերաւ այդ խնձորները ձէկ-ձէկ շարեց այդ պնակին ձէջ, է՛ն զլիս խնձորը չրեց (տապակեց)՝ ձիջուկը Հանեց, աղջկան փոխած ճատնին դրաւ ձէջ, տապակը դրաւ տապակի վրայ, դրաւ խնձորներուն ձէջտեղը, դրաւ թաշկինակի ծը ձէջ, տուաւ ճաճիկին ձեռքը, ըսաւ.

— Մաճի՛կ, որ կ'երթաս՝ ան քեզի տեսնէ՛ կ'ըսէ ձի՛ գար ինձ ճօտՀաս, այս թոյնը կը խմեմ՝ ի՛մ ձեղքը կ'իյնայ քու վզին:— Դուն ըսէ՛ Այն ճարդուն արեւն ինչ կը սիրես՝ որ ինչ ծարբար ես խմեր Հետ՝ դուն զիս թողնես՝ եօթը ոտք գամ բեզի ճօտՀասնամ, դառնամ...:

Մաճիկն ելաւ՝ տփսէն տուաւ գնաց:

Դռնապաններն ըսին, — Մաճի՛կ, արդիւում է, ձի՛ ճտներ ներս:

Ըսաւ՝ Ես պալատէն եմ եկեր, երթամ այդ աղջիկը յորդորեմ, երթայ Պապէ-Փռնկի տղան առնէ, զօրքը քաշուի, ձենք ազատուինք...:

Թող տուին, ճաճիկը ճառաւ ներս:

Այդ աղջիկը որ տեսաւ՝ ըստւ, — Պառա՛ւ, ձի՛ գար, արդէն ի՛մ զլուխը թէ կը ցաւի՝ պառա՛ւց է կը ցաւի...: ա՛ն էնա թոյնը կը խմեմ՝ ի՛մ ձեղքը կ'իյնայ քու վիզ...:

Պառաւն ի՞նչ ըստւ, — Դու քու Ատուա՛մ կը երեսն՝ ու այն ճարդու արեւը՝ որ ինչ ծարբար ես խմեր Հետ՝ դու թողնես ես եօթը քայլ գամ քեզի ճօտՀաս, դառնամ...:

Աղջիկն ըստւ (ճտովի), — Հարկաւ ասիկ բան ծը զիտէ՛ որ ի՛մ սիրու անունը կուտայ, — ըսաւ՝ Արի՛:

Գնաց ճօտՀարցաւ, այդ խնձորները դրաւ առջիւր, — Ես գիտե՛մ ըստւ, քու բերանը չորցեր է...: ձէկ Հատ կե՛ր այս խնձորներէն՝ թող քու բերանը թացուի...:

Աղջիկն ալ՝ զլիս խնձորը վերցուց, դանակը դրաւ վրան պիտի կտրէր՝ տեսաւ որ խնձորը ինքնէինք տապկաւ, բան ծը ինկաւ իր գոգը...: տուաւ

աշեց՝ որ ի՞նչ կ'աշէ... իր ճատնի՛ն է, ինչ Ա-
րեւմտոց Թագաւորի լաճուն Հետ փոխեր է...:

Ըսաւ. Մաճիկ, այս ճատնի՛ն տէրը ո՞ր տեղ է:

Ըսաւ. Մեռնի՛ճ քեզի, այս եղաւ երկու զիշեր
որ իճ առնը Հիւր է եղեր, ճինչեւ լոյս իճ թեւը
անոր գլխուն ըրեր եճ բարձ:

Ըսաւ. Մաճիկ, քանի՞ ճարդ կայ Հետ:

Ըսաւ. Ինքն է՝ իր ճառան:

Գիտե՛ճ, ըսաւ, չի՛ կընար զիս ազատէ տանի,
բայց թող երթայ արքունի պարտէզը (խաս-բախ-
չէն), ես ճունեալի կուտամ կանչել՝ որ ես կ'երթամ
խաս-բախչէն գամ, ապա ես՝ իճ կամքը կուտամ՝
կ'երթամ Պապէ-Ֆաւրէի լաճը առնեմ... թող գայ
խոս բախչէն՝ իրար տեսնենք...:

Պառաւր զարձաւ եկաւ տուն. թագաւորի տղուն
ըսաւ:

Թագաւորի լաճն էր՝ Հեա-լուսուն շուտ ելաւ
գնաց արքունի պարտէզը, շա՛տ սպասեց, քունը
առաւ վրան՝ քնաւ...:

Աղջիկն ելաւ ճունեալի կանչել առաւ՝ որ
ճա՛րդ չմնայ փողոցները, ես երթամ խոս բախչէն
պտըտելու, դառնամ գամ՝ այլ եւս իճ կամքը կու-
տամ...:

Թագաւորի աղջիկն ելաւ գնաց արքունի պար-
տէզը, այնչափ ճան եկաւ՝ ճա՛րդ չկայ պարտէզին
ձէջ... եկաւ աղբիւրին վրայ, տեսաւ որ ճարդը
քներ է վեղ՝ աղբիւրին...:

Այն ժամանակներու օրէնքն ալ այնպէս էր
որ՝ երկու հոգի ինչ ձէկզձէկ կը սիրէին, ձէկը որ
քնուկ բլար այն ձէկալը չէր երթար քունէն վեր
Հաներ՝ ճինչեւ քունէն զարթէր. եթէ շնորհք ճու-
նէր՝ խաղով կանչէր Հաներ՝ կը Հանէր, եթէ ոչ՝
ձայն չէր տար ճինչեւ զարթէր ելնէր...:

Ան ալ չկանչեց. քանի՞ գնաց եկաւ՝ քնուկ...:
Ան ալ Հանեց ճա՛ն ճը դրաւ անոր ծոցը, թողուց
գնաց իր պալատը:

Տղան որ զարթաւ՝ ո՛չ աղջիկ կայ, ո՛չ բան...:

Ելաւ զարձաւ եկաւ պառուտ տունը, Լէւօն
հարցուց ըսաւ,— Ի՞նչպէս էր, տեսա՞ր:

Ըսաւ. Ձէ՛, իրաւի, ճինչեւ իրիկուն ես Ֆիացի
այնտեղ՝ անիկ չեկաւ...:

Ըսաւ՝ Կ'ըլլայ որ եկեր է՝ դուն քնուկ ես ե-
ղեր...:

Ըսաւ՝ Ձէ՛, ես չեմ քնիր...:

Ըխե՛ճ, ըսաւ, քու վրայ. ծիր-ծոցդ նայէ՛ ը-
խե՛ճ (1) նշանաբան թող չէ՛ տուեր...:

Ձեռքը առաւ զրպանը, ճա՛նը Հանեց
դուրս... ըսաւ՝ Տղա՛յ, Լեւո՛ն, ասի՛կ ի՛նչ է...:

Ըսաւ՝ Գիտե՞ս ի՛նչ է... կ'ըսէ՛ Դուն ճի՛ժ
եւ գնա՛ ճանոցի՛կ խաղա՛, դուն ինձի տարեկից
չես...:

Ըսաւ՝ Մաճիկ, դու քու Աստու՛ճ, դարձի՛ր
Հե՛ղ ճալ գնա՛, նայինք ի՞նչ պիտ' ըսէ...:

Ելաւ Հեղ ճալ գնաց, այս անգամ զոնապան-
ները բարեւ բռնեցին առջեւը. ըսին՝ Այս պառաւը
խօսքը-կտուր պառաւ ձէ՛, ձէկ Հեղ գնաց ներս՝
աղջիկը ճաշեալիկ առաւ կանչել...:

Գնաց աղջկան ձօտ, աղջիկն ըսաւ, Մաճիկ,
ինչո՞ւ եկար... ես գնացի՝ անիկ քնուկ էր... ա-
նիկ ճի՛ժ է, իճ տարեկիցը չէ...:

Պառաւն ըսաւ,— Խնդիրք կ'ընեմ բեզի, ա՛յս-
բան ճամբայ եկեր է... ձէկ բա՛ն ճալ ցոյց տաս՝
նայինք ի՞նչպէս իրար պիտ' տեսնուք...:

Ըսաւ՝ Գնա՛ ըսէ՛ թող առտուն ալ երթայ՝
բայց ըսէ՛ թող չքնիր...:

Տղան ելաւ առտուն ալ գնաց, նորէն պարտէ-
զի ձէջ կան եկաւ, կա՛ն եկաւ... գնաց աղբիւրին
վրայ նստաւ, կնքա՛ց, կնքաց՝ գլուխը դրաւ գետին՝
քնաւ...:

Աղջիկն եկաւ պարտէզի ձէջ՝ ճան եկաւ, ճա՛ն
եկաւ, գնաց տեսաւ որ աւաղանին եզերքը քներ է:
Դարձեալ չկանչեց՝ Հաներ էր... շա՛տ կան եկաւ՝
գնաց, նորէն քնուկ էր:

Այս անգամ ալ ելաւ փայտ ճը կտրեց (ճոեց)
ըրաւ նետ-աղեղի օղ՝ դրաւ անոր ծոցը, զարձաւ
եկաւ նստաւ կառքը՝ գնաց:

Մնա՛ց ճինչեւ իրիկուն՝ աղան զարթաւ ելաւ՝
որ աղջիկը չկա՛յ, ճա՛րդ չկայ... Ըսաւ՝ Իրա՛ւի,
ասի՛կ զիս խաբեց, նորէն չեկաւ...:

Դարձաւ եկաւ պառուտ տունը. Լէւօն հար-
ցուց. Տեսա՞ր, ըսաւ, ասո՞ր ի՛նչ կ'ըսէր:

Ըսաւ՝ Չանըմ, չե՛ճ տեսեր... զիս խաբեց, չէր
եկեր պարտէզը...:

Ըսաւ՝ Անկասկա՛ճ՝ ան եկեր է՝ դուն քնուկ ես
եղեր...:

Թէ՛ Իրա՛ւի, ես չեմ քնիր:

— Է՛, ըսաւ, որ դուն չեա քներ՝ նայի՛ճ քու

(1) Տեսնեմ:

վրադուխը աշէ՛՛ նշանաբան ծը չէ՞ դրեր երէկ-
ուան պէս...:

Ձեռքը տուաւ ծայր՝ այդ կոր փայտը հանեց
դուրս ծոյէն, ըսաւ՝ Բաի՛կ ի՛նչ նշանակ է, Լեւոն...

Ըսաւ՝ Դիտե՛ս առ ի՛նչ նշանակ է ... ,
կ'ըսէ Դուն ի՛սկ եւ իսկ ճի՛ծ ես, ա՛ն այս նետ-
աղելը՝ գնա՛ Ծ'նճղուկ սպանէ, դուն ի՛մ հաւա-
սարը չես:

Ըսաւ՝ Մածի՛կ, դո՛ւ քու Բատու՛ծ, գնա՛
դի՛ր ծը եւս, նայինք ի՛նչ կ'ըսէ:

Մածիկը ելաւ գնաց:

Աղջիկն ըսաւ՝ Այսօ՛ր ինչո՛ւ եկար..., ա՛ն նա
երկու հեղ է կ'երթամ պարտէզ՝ անիկ բնուկ է...,
անիկ ի՛մ հաւասարը չէ, ինչպէս որ եկեր է՝ այն-
պէս թող երթայ...:

Պտուան ըսաւ՝ Խնդի՛րք կ'ընեմ. ձէկ բա՛ն
ձ'ալ բռէ..., ա՛յսքան ամսէ ծը ճամբայ եկեր է, ի-
րար տեսէք՝ ու նորէն թող երթայ...:

Ըսաւ՝ Մէ՛կ բան ծը կայ, ու ձէ՛կ օր...: Ես
գիտե՛մ ան զիս չի կրնար տաներ, բայց այս ձէ՛կն
ալ թող ըլլայ...: Գնա՛ ձեռք ծը աղջկայ հագուստ
ա՛ն՝ հագցո՛ւր ըրէ աղջիկ, տո՛ւր քու ետեւը, ըրէ՛
քեզ աղջիկ՝ ա՛ն եկուր այստեղ, իրարու հետ զու-
յենք՝ ու թող երթայ...:

Պառաւր գնաց լաճուն պատմեց: Լաճը հա-
նեց երկու-երեք հարիւր ոսկի տուաւ ծածիկին, ը-
սաւ, — Ա՛ն այս դրածը, գնա՛ շուկան, ա՛յնպէս
ձէկ հագուստ ծ'առնես որ թագաւորի աղջկան վրայ
անգամ չգտնուի...:

Պառաւր գնաց՝ ձեռք ծ'այնտեսա՛կ աղջկայ-հա-
գուստ առաւ..., տարաւ տուն:

Թագաւորի աղան ելաւ որ պիտի հագնէր՝ Լէ-
ւոն թող չտուաւ. ըսաւ՝ Դուն երկու հեղ գնացիր՝
չկրցար բան ծը շինելի, դուն քու տեղը հանգիստ
նստէ՛՛ ես երթամ...: Հապա դուն զիս ինչո՞ւ ես
բերեր քեզ հետ՝ եթէ ես քեզ համար չբանիմ...:

Ելաւ Լեւոն հագաւ այդ աղջկայ հագուստը,
եղաւ ձէկ աղջիկ ծը, այնպէ՛ս աղջիկ ծ'եղաւ որ՝
աշխարհք այնպէս խօրօտ աղջիկ չէր եղեր, թո՛ւ
ձաղ չկար անոր երեսը:

Ելաւ ինկաւ պառուուն ետեւի՝ գնացին:

Գնացին որ աղջկան ծօտհըսցան՝ աղջիկը այդ
թունալից գաւաթը զարկա՛ւ գետին՝ կոտրե՛ց...,

վաղեց գնաց՝ ձեռքը նետեց որ պիտի գրկէր պաղ-
նէ՛ր..., ան ալ ըսաւ, — Ես այն չե՛մ՝ ինչ դուն
գիտես..., ես անոր ծառա՛ն եմ:

Ըսաւ՝ Որ դուն անոր ծառան ես՝ ինչո՞ւ ե-
կար..., ինձի պիտէր ա՛ն դար, ձենք այստեղ իրա-
րու հետ զրոյց տայինք. ես գիտե՛մ՝ ան զիս չի
կրնար տաներ, ան երթար ի՛ր ճամբուն հետ՝ ես
ի՛մ ճամբուն...:

Լեւոն ըսաւ, — Դուն հանգիստ կ'աց. դուն հա՛ն
քու հագուստները՝ ի՛մ հագուստները հագիր, ես ալ
հագնիմ քու հագուստները, ամէն բան կ'ըլլայ...:

Հալափոխուեցան, — Ահա՛ն, ըսաւ Լեւոն, այժմ
ե՛լ ծածիկին հետ գնա՛, ըսաւ: Ես կ'ըլլամ հարս՝
կը նստիմ այստեղ: Բայց ապա, ըսաւ, քառասուն
օր ինձ համար սպասեցէք, այս ծածիկին տունը
միաք, քառասուն օրէն ես եկա՛յ. թէ չեկայ, գնա-
ցէ՛ք:

Ելան գնացին...:

Անոնք թող երթա՛ն..., — Լեւոն եղաւ հարս՝
նստաւ այդ տեղ, ելաւ ծառետիկ տուաւ կանչել,
ըսաւ, — Ահա՛ն, ես կ'երթամ Պապէ-Ֆուրնիկ տղան
կ'առնեմ, թող այս քաղաքը հանգստանայ...:

Ելան աղջիկը — Լեւո — տունը Պապէ-Ֆուրնիկ
թագաւորի ծարղերուն, ելան՝ հարսն առին տարան
Պապէ-Ֆուրնիկ քաղաքը. տարան այնտեղ՝ եօթն օր
եօթը գիշեր հարսնիս ըրին:

Անոնց օրէնքն ալ այնպէս էր որ՝ քա՛նի
հարսնիքը չէր պրծեր՝ օրէն քոյր ծը պիտ' երթար
հարսին քովը պառկէր:

Այդ Պապէ-Ֆուրնիկն ալ երեք աղջիկ կար:

Առաջին գիշերը՝ ձեմ աղջիկը գնաց հարսին
ծօտ պառկեցաւ: Հագուստները հանին որ պիտի
պառկէին, հարսը իր շապիկ վարտիքը չհանեց:
Աղջիկն ըսաւ, — Հա՛րսա, ինչո՞ւ չես հաներ քու շա-
պիկ-վարտիքը՝ հանգիստ պառկեր:

Ստիպեց հանել տուաւ, հարսն այս անգամ
ծունկերը տուաւ փորին՝ պառկեցաւ:

Ըսաւ, — Հա՛րսա, ոտքերդ պարզէ՛՛ հանգիստ
պառկէ, քանի օր է՝ կառքի ձէջ ոտքերդ քաշ-
ուեր են՝ այնքան ես կծկեր:

Ըսաւ՝ Ի՞նչ ընեմ, սովորած չեմ..., ես որ ի՛մ
ոտքերը չկծկեմ ի՛մ փորի դէմ՝ ի՛մ քունը չի տա-
նիր...:

Պապէ-Ֆուրնիկ աղջիկը ասոր վրայ սկսաւ ա-

սոր ստեղծելը չփեկ: Ան ալ իր անօթէն կը կծկուի: Գիշեր ձնէն լոյս՝ քունը չտարաւ, չժտեց որ քնանար:

Այդ գիշերն ինչեւէ լուսցուց. ձեկալ օր՝ կարգը ձիջնեկ աղջկան էր՝ անիկ եկաւ ծօտը: Միջնեկ աղջիկն ալ ձեծին պէս բրաւ, Ա. Է. օ ձիջնեկ լոյս չքնացաւ:

Հերթը եկաւ պղտիկ աղջկան:

Պղտիկ աղջիկը որ եկաւ պիտի պառկէր՝ տեսաւ հարսը որ շատ խօրօտ(1) էր, ըսաւ, — Ա՛խ ձեզք չէ՞ որ քու սիրտակ ծարձիկը դպի իմ եղբոր սեւ ծարձիկն... երանի թէ հիմա կա՛մ ե՛ս կա՛մ դուն՝ ձեկը ըլլար ծարդ, ձեկը՝ կնիկ, իրարու հաւասար ըլլայինք՝ իրար առնէինք...:

Հարսն ըսաւ, — Ի՞նչ պիտի ընես..., Աստուած ձեզ կնիկ է ստեղծեր...:

Աղջիկն ըսաւ, — Հա՛րսէ, դո՛ւն ալ կոյս ես՝ աշխարհ չես ծտեր՝ ու ե՛ս ալ կոյս եմ, արի՛ աղաչենք Աստուած, թերեւս Աստուած ձեր երկուքէն ձեկն ընէ ծարդ...:

Հարսն ըսաւ, — Այսքան ժամանակ ո՞վ է լսեր՝ որ ձեկ աղօթքով՝ աղջիկը ծարդ ըլլար...:

Աղջիկն ըսաւ, — Կ'ըլլայ որ Աստուած ձեր ձայնը լսէ՝ ձեր երկուքէն ձեկն ընէ ծարդ: Արի՛ աղօթք ընենք...:

Առին աղօթք ընել...: Հարսն ըսաւ՝ Այտեղ աղօթք ընենք՝ չի՛ ըլլար, ձեր սրտերը կը ձեղաւորնան. դուն կա՛ց այս սենեակ, ես՝ երթամ ձեկալ սենեակ, աղօթք ընենք:

Պապէ-Ֆոլնիկի աղջիկը գնաց ուրիշ սենեակ ձաղթք կ'ընէ...: Հարսն ալ — Ա. Է. օ՝ երկու օր էր աչքերը չէր խփեր՝ պառկաւ քնաւ:

Ժամ ծեփեալ անցաւ, Պապէ-Ֆոլնիկի աղջիկը եկաւ՝ դուռը կը տըխտըխկացնէ, կ'ըսէ, — Հա՛րսէ, ի՞նչ լուր:

Հարսն ըսաւ, — Ջա՛նք, դեռ նո՛ր գնացիր..., գնա՛ աղօթք ըրէ...:

Գնաց քիչ ծալ աղօթք ըրաւ, չկրցաւ դիմաւոր, նորէն եկաւ՝ հարցուց, — Եղա՛ւ...:

Ըսաւ, — Ի՞նչ ըսեմ..., գնա՛ աղօթք ըրէ՛, նաչինք ի՞նչ պիտի ըլլայ...:

Գնաց, նորէն եկաւ, կանչեց ըսաւ, — Հա՛րսէ, ի՞նչպէս եղաւ...:

Ա. Է. օ ելաւ դուռը բացաւ. Պապէ-Ֆոլնիկի աղջիկը գնաց ներս, տեսաւ որ հարսը եղեր է ձա՛րդ...:

Ըսաւ, — Հա՛րսա, ես քեզ չըսի՞ որ ձեր ձայնն Աստուած շատ պիտի լսէ..., ձե՛ք երկուքս ալ կոյս ենք..., տեսա՞ր ի՛նչպէս Աստուած ձեր երկուսէն ձեկն ըրաւ ձա՛րդ...:

Պապէ Ֆոլնիկի աղջիկն եկաւ իր եղբոր արկղը բացաւ՝ եղբոր հագուստները հանեց հագաւ՝ եղաւ ծարդ. գնաց իր հօր ախոռը՝ ըսաւ, — Ախոռա՛պեա, թագաւորն իր հեծնելու ձին կ'ուզէ:

Ախոռապետն ալ եկաւ նժոյգ ձին քաշեց դուռ, թածրը վրան դրաւ՝ կապեց, առաւ քաշել, աղջիկն ըսաւ, Ձե՛. դուն դարձիր գնա՛ քու տեղ, ես կը քաշեմ կը տանիմ:

Ախոռապետը քաշուեցաւ գնաց, ան ալ ձին առաւ տարաւ պայտադործի խանութին առաջ, կանչեց ըսաւ՝ Պալտա՛ր, եկուր իմ ձին պայտէ՛:

Ըսաւ, — Ա՛յ ծարդ, լոյս չկա՞յ աշխարհ..., լուսուն արի՛ պայտեմ..., գիշերով ձի կը պայտուի՞...:

Ըսաւ, — Ջա՛նք, ցերեկով պայտես՝ քանի՞ պիտի պայտես, քսան դրուշի պիտի պայտես..., ա՛ռ քեզի երկու ոսկի՛ իմ ձին պայտէ՛...:

Պալտարը կանչեց իր աշկերտը, ըսաւ՝ Տղա՛յ, ձե՛ք ձեկ ամիս բանինք՝ հազի՛ւ երկու ոսկի առնենք..., ե՛լ ասոր ձին պայտենք՝ երկու ոսկին առնենք...:

Ձին առին պայտել, ըսաւ՝ Իմ ձիւ պայտերը ետեւ-առջեւ պիտի պայտէք...:

Պալտարն ըսաւ, — Ա՛յ ծարդ, ետեւ-առջեւ պայտ կ'ըլլա՞յ...:

Ըսաւ, — Ինչո՞ւ չ'ըլլար..., ետեւ-առջեւ դարկ(1): Ետեւ-առջեւ դարկաւ, ելաւ՝ ձին առաւ՝ գնաց: Տարաւ այն սենեակին դուռը՝ ինչ որ հարսը ձե՛ջը: Ինքը գնաց սենեակը, իր հագուստները հանեց հազցուց Ա. Է. օին, Ա. Է. օ եղաւ կրկին նախկին ծարդը: Ելան՝ ձին հեծան՝ գնացին...:

Հետ. լուսուն՝ աղախինները եկան գնացին հարսի սենեակը, ջուր պիտի տանին, բան պիտի տանին..., տեսան՝ ո՛չ հարս կայ, ո՛չ պղտիկ աղջիկը..., երկուքն ալ հոն չէ՛ն:

Ելան իմաց առին թագաւորին, ըսին, — Գիշերը

(1) Նշուած, հակառակ դիրքով պայտերը գամել:

(1) Գեղամի, աղուորիկ:

գողեր եկեր են քու հարսն ալ են տարեր, աղջիկն ալ...

Թագաւորը ելաւ ճարդեր հանեց՝ ըսաւ, — Կա՛ն եկեք, նայինք դէպ ո՞ւր են տարեր...

Այդ քաղքին բոլորը պարիսպ էր. այդ պարիսպին ալ չորս հատ դուռ կար. դիշերն ալ թարծ ձիւն էր եկեր. տեսնո՞ր ձե՛կ հեաք՝ դուրս չէր գնացեր, ձինակ ձէկ հեաք՝ դրսէ՛ն եկեր է ներս:

Թագաւորին լուր տուին ըսին, — Թո՛ւ ձէկ հեաք դուրս չէ՛ գնացեր, ձինակ ձէկ ձիւ հեաք՝ եկեր է քաղքի ձէջ:

Թագաւորն ըսաւ, — Որ այդպէս է՝ անոնք դուրս չեն գնացեր. դռները դոցեցէք՝ քաղքի ձէջ կան եկեք:

Անոնք թող քաղքին ձէջ կա՛ն գան..., Լէւօ՛, դուն ա՛ն աղջիկը գնա՛...

Լեւոն ու աղջիկը ելան գնացին այն քաղաքը՝ որ ինչ թագաւորի աղան ձէջը:

Ջրոն ալն օր քառասուն օրը լրացեր էր. Իրիկուան ուշ տեսն հասան քաղաք:

Գնացին այդ պառուս դուռը՝ որ ինչ անոնք ձէջն են:

Լէւօ ձիւն իջաւ տակէ՛ ձին տուաւ նշանածին ձեռքը, ըսաւ, — Դուն այս ձին բռնէ՛: Ինքը ելաւ երգիքը, ըսաւ՝ նայի՛մ գնացե՛ր են՝ թէ՛ դեռ այստեղ են:

Տեսաւ որ ածէնը ձէյձէկ կողմէ ճը կուլան, — Վա՛յ Լէւօ՛, դուն ի՞նչ եղար, քառասուն օրը լրացա՛ւ չեկա՛ր...:

Լէւոն կանչեց ըսաւ, — Դուռը բացէ՛ք՝ ես եկայ...

Ելան դուռը բացին, գնացին նե՛րս, շա՛տ ուրախացան...

Հիմա թագաւորի աղան կը ննչի Լէւօի բերած աղջիկը. քանի իր նշանածն ա՛լ աւելի խօսօտ էր, սիրտը փոխուաւ:

Լէւօն հասկցաւ, ըսաւ, — Այդ ծառածուռն ինչ դուն կ'ընես՝ չեղա՛մ բան է. երկուքէն ո՛ր ձէկը կ'ուզես՝ քեզի, ձէկը՝ ինձի:

Թագաւորի աղան իր ձիւ-ինի (ձաքին ձէջ) ըսաւ, — Ձա՛նք, հիմա եթէ ես անոր բերածն առնեմ՝ անոր պիտի մնայ..., ասոր աղէկն այն է՝ անոր բերածը մնա՛յ իրեն, ի՛մ բերածն ինձի:

Մնաց, հետ-լուսուն ելան, պառաւին պարգեւ տուին, ելան պառաւէն հրածեշտ տուին՝ ինկան ճամբա՛յ...:

Ինկան ճանապարհ՝ գնացի՛ն..., շատ ու քիչ՝ Աստուած գիտէ..., — ճամբան այդ թագաւորի աղան գաւակ ճը եղաւ: Քանի ձա՛միս ճամբայ գնացին, գնացին՝ նորէն ընկան այդ կապանը, դիշերը դրաւ վրաները, ձթնեց, ա՛չ չեն կրնար երթալ:

Թագաւորի աղան ըսաւ, — Լէւօ՛, ի՞նչ ընենք, ձթնեց՝ ա՛լ չենք կրնար երթալ:

— Անցած անգամին ինչպէս եկանք այստեղ՝ քարի (ժայռի) ճը տակ պառկեցանք՝ այսօր նորէն կ'եկենք այն քարին տակ՝ ձինչեւ լուսնայ:

Ելան քարին տակ պառկան քնան:

Երեքն ալ քնան, Լէւօ մնաց արթուն:

Կէս դիշերին տեսաւ որ՝ ձէկ լո՛յս ճը դարկաւ կապանին ձէջ: Քարին տակէն դուրս ելաւ, տեսաւ որ ձէկ ճարդ ճը ա՛յն սարի գլուխն է կանգնեց, ձէկ ալ՝ ձէ՛կ սարին գլուխն է կանգնեց: Ջրոն այն անոնց լոյսն ու շառաւիղն է դարկեր կապանին ձէջ...:

Ջրոն ձէկը Սըբ Գեորգն է, ձէկը Սըբ Սարգիս:

Սըբ Գեորգը հարցուց ըսաւ Սըբ Սարգիսին, — Ատանք ի՛նչ ճարդ են այդ կապանին ձէջ...:

Սըբ Սարգիսն ըսաւ, — Անիկ, Արեւմտոց Թագաւորի լաճն է ու Լէւօն: Գնացին նշանածն առին եկան:

Ըսաւ, — Աղէ՛կ, բերի՛ն բայց անոնց վերջն ի՞նչ պիտի ըլլայ...:

Ըսաւ, — Անոնց վերջն այսպէս պիտի ըլլայ. — Պապէ-Փռնկի քաղաքէն հճայութիւն են ըբեր, աստուն որ արեւը տաքնայ՝ Ոսկի Բաղէ ճը պիտի գայ անոնց առջեւ..., սակայն անիկ ոսկի բաղէ չէ՛, զիւթութիւն է, գանոնք պիտի ուտէ...: Անոնց ձէջ խելքուն ճարդ ձ'ըլլայ՝ յառաջագոյ՛մ երթայ՝ երբ այն ոսկի բաղէն գայ՝ զարնէ սպանէ: Խէյ ճըն ալ, երբ երթան քաղաք՝ պալատին դռնէն երբ ծանեն ներս՝ կախարդանք են ըբեր, դրան ճակտընոցէն չորս հատ թուր են կախեր, ձէկը պիտի երնէ՝ ձէկը իջնէ, չորսի վիզն ալ պիտի կտրէ...: Անոնց ձէջ որ խելքուն ճարդ ըլլայ՝ պարիսպը պատուել տայ՝ ուրիշ դուռ բանալ տայ՝ ծանեն ներս: Մէկ ալ՝ այնպէս զիւթութիւն ձ'ըբեր են որ՝ թագաւորի լաճն ու իր

կնիկը՝ առաջին զիշեր որ պառկին՝ պատը պիտի պատուռի՝ վիշապ մ'ենե՛ղ գուրս՝ զանոնք պիտի կլլէ...։ Անոնց մէջ՝ զիտուն մարդ ըլլալ՝ զիշերը մնայ արթուն, զարնէ՛ վիշապը սպաննէ...։ — ճիշդն թէ՛ այդ չորտէն ո՛րն ինչ արթուն է՛ կը լսէ, իրա-
բու պատմէ այս բան՝ կը դառնայ քար...։

Հետ-լուսուն ելան ձիերը հեծան պիտի երթան՝
Լէւօն ըսաւ թագաւորի տղուն, — Շահգա՛ղա, այս-
բան ժամանակ ինչ կան եկանք՝ դուն իմ առջեւէն
ես եղիր՝ ես քու ետեւէն, բայց այսօրէն սկսած՝
ե՛ս պիտի անցնիմ քու առջեւը։

Թագաւորի տղան բարկացաւ այդ խօսքին վը-
րայ, ըսաւ, — Տե՛ս, դեռ չենք եկեր մեր քաղաքին
ձօռհըղեր՝ առիկ կը հպարտանայ կ'ըսէ՛ Պիտի
ե՛ս անցնիմ առաջ...։ վաղը երթանք քաղաքը՝
պիտի ըսէ՛ ե՛ս եմ չարչարուեր՝ այս կնիկը բե-
րեր...։

Թագաւորի տղուն կնիկը հասկցաւ որ Շահ-
գառէն տրտմաւ, ըսաւ, — Ի՞նչ կը տրտմիս, արդէն
Լէւօն պէտք է անցնի մեր առջեւ, մինչեւ օրը
մեռնելուն՝ ի՞նչ որ ըսէ՛ իր խօսքը պիտի ըլլայ՝
Եթէ դուն անոր խօսքէն ելնես՝ ո՛չ դուն ինձի է-
րիկ, ոչ ես քեզի կնիկ...։ դուն ինձի հայր ու եղ-
բայր կենաս (1)...։

Լէւօն ելաւ ձին քշեց անցաւ առաջ, տեսաւ
որ՝ արեւդիպնոցին (արշալոյսին) երկինքէն ոսկի
բազէ մը ֆը՛ռ եկաւ իջաւ իրենց առջեւ...։ Լէւօն
ի՛սկոյն թուրը քաշեց՝ թուր մը նետեց՝ ոսկի բա-
զէն սպանեց...։

Թագաւորի տղան բարկացաւ, ըսաւ, — Մեր ա-
մէն ինչը լծան էր, այս մէ՛կ բանն էր պահաս՝ որ
տանէինք պալատը՝ զնէինք վանդակի մէջ...։

Լէւօն ըսաւ, — Չգիտցայ՝ զարկի սպանեցի,
ի՛նչ եղաւ...։

Նլան գնացին՝ Արեւմտոց քաղաքին ձօռհը-
ղան(2), լուր գնաց թագաւորին, ակընջկըլայ (աւե-
տիս) տարան ըսին, — Քու տղան եկաւ, իր նշա-
նածն ալ բերած է հետը։

(1) Երգումի ձեւ մը, այսինքն «կ'երգնում
ու...։ Բեզ իբր երիկ պիտի չնամնում ալ եւս,
դո՛ւն ինձ համար հօր կամ եղբոր պէս պիտի
մնաս։

(2) Մօտհրմալ — մօհաւա-հալ, մօհեհալ,
հառե-հաւա ըլլալ։

Ելաւ՝ իր զօրքը՝ սպաներով ու մեծաւորներովը
զրկեց տղուն ընդ առաջ...։

Լէւօն ըսաւ, — Շահգա՛ղա, աղէկ չէ՛՝ որ
դուն թագաւորի տղայ ըլլաս՝ Հին գուռով մտնես
ներս...։ պարիսպը տուր պատուել, ուրի՛շ դուռ մը
տուր բանալ, որ քու ժողովուրդը տեսնեն՝ վախնան,
ըսեն՝ Ի՛նչ բարկ մարդ է...։

Ելաւ՝ պարիսպը տուաւ պատուել, նոր գուռ
բացաւ, մտան ներս։

Գնացին ներս, մաքուր սենեակ մ'անոնց հա-
մար պատրաստեց էին, զրին սենեակն-ինն։

Մնաց մինչեւ իրիկուն՝ թագաւորի տղան ը-
սաւ, — Լէւօ՛ն, դէ՛հ, գնա՛ քու սենեակդ՝ հանգըս-
տացիր։

Լէւօն ըսաւ, — Ձէ՛, արքայորդի՛, այսօր զիշերն
ալ պանդխտութի՛ւն ըսել է։ այս զիշերն ալ ես
պիտի մնամ՝ ձեզ պառկեցնեմ՝ յետոյ երթամ։

Լէւօն անոնց անկողինը պատրաստեց, անոնք
պառկեցան, թագաւորի տղան ըսաւ, — Լէւօ՛ն,
այլ եւս դուն գնա՛, մենք պառկեցանք։

Լէւօն ելաւ՝ սենեակի դուռը բացաւ՝ դրաւ
վրան, զինքը տուաւ դրան ետեւը՝ պահուրանցաւ
մնաց սենեակը։

Ժամ մը-երկուք անցաւ՝ տեսաւ որ պատը
պատռա՛ւ՝ մէկ վիշապ մը գլուխը հանեց դուրս՝
արքայորդին ու կնիկը պիտի կլլէր...։ Լէւօ թուրը
քաշեց՝ այդ վիշապը բրդեց, վիշապին կտորները
ժողվեց մէկ անկիւն՝ հին լաթ մը քաշեց վրան...։
տեսաւ որ մէ՛կ պուտ (կաթիլ) արին՝ թուր է թա-
գաւորի տղուն երեսը...։

Ան ալ մտմտաց ըսաւ՝ Ես ի՞նչ պէտք է ընեմ,
այդ պուտ արիւնը անոր երեսէն ի՞նչպէս վերցնեմ՝
որ կնիկը չզարթի...։ Հիմա ես շորով վերցընեմ՝
չի՛ ըլլար...։ լեզուով վերցընեմ՝ թոյն է՝ զիս կը
սպանէ...։

Մտածեց, խորհեցաւ՝ ըսաւ, — Ծօ՛, չէ՞ մեր
Շահգաղի խէնջարը դեղթափ է...։ անոր խէնջա-
րով վերցընեմ...։

Խէնջարը բարձի տակէն հանեց, քաշեց, ծուն-
կերը զարկաւ անկողինն քով, քօջաւ, խէնջարի ծայ-
րը բռնեց երեսին վրայ՝ որպէս զի այդ կորեկի
հատի պէս պուտ արիւնը քաշէ։

Խէնջարը ինչ բռներ էր թագաւորի տղի երե-
սին վրայ՝ թագաւորի տղան աչքերը բացաւ...։ տե-
սաւ որ խէնջարը ձեռքը՝ բռներ է իր վրայ...։ —

— Վա՛յ, ըսաւ, Լէւօ՛, որ դուն զիս պիտի սպանէիր՝ ա՛յնքան սարեր եկանք, գիշերը կապանները քնացանք, թող դուն այն տեղերը զիս սպանէիր... ինչո՞ւ կը բերէիր այստեղ՝ իմ տան ձեջ՝ զիս պիտի սպանէիր...:

Ըսաւ, — Աստուած վկայ, ես քեզ չե՛մ սպաներ... ինչո՞ւ ես քեզ սպանեմ...:

— Է՛, աղէ՛կ, ըսաւ, որ դուն զիս չէիր սպաներ՝ ապա այդ ի՞նչ խենջար է քու ձեռքը...:

Ըսաւ, — Ձանր՛ւմ, իմ ճեղքը մի՛ ձգեր քու վիզը..., ես քեզ չեմ սպաներ, ու մինչեւ որը մեռնելուն՝ ես քեզմէ չեմ անցնիր...:

Ըսաւ, — Ձե՛. որ դուն զիս չսպանէիր՝ չէիր քօշեր՝ այդ խենջարը բռներ իմ վրայ...:

Լէւօ չաղատուեցաւ անոր ծօռէն..., ըսաւ, — Շահգաղէ՛, դո՛ւն զիտես՝ քու Աստուած..., աւուր-դատատանին՝ իմ ձեղքը քու վիզն ըլլայ...:

Ու դարձաւ այդ անցքերը պատճեց,—

Ըսա՛ւ..., — Որ ճենք կապանէն դուրս ելանք՝ արեւդիպնոցին ոսկի բաղէ մը չեկա՛ւ մեր առաջ...: Անիկ ոսկի բաղէ չէ՛ր՝ անիկ Պապէ-Փռնիկի քաղքէն դիւթութիւն էին ըրեր՝ որ քիչ բան մը ձեզ հետ պիտի դարձնէ չորս ալ սպանէր...:

Լէւօ՛ չս՛ւր (մինչեւ) ծունկերն ի վար եղաւ քար...:

Թաղաւորի տղան ըսաւ, — Լէւօ՛, խնդրեք կ'ընեմ, ա՛լ մի՛ պատճեր...:

Լէւօն ալ ըսաւ, — Ո՞վ է տեսեր՝ մինչեւ ծունկերն ի վար քար՝ ծունկերէն վեր մա՛րդ ըլլայ..., պատճութիւնը լրի՛ւ պիտի ընեմ՝ որ ըլլամ բա՛ր՝ ազատուի՛մ...:

Ըսա՛ւ..., — Աղէ՛կ, որ ճենք ինչ եկանք՝ որ հին դռնով մտնէինք ներս՝ ի՛նչ պիտի ըլլար...: Բայց՝ Պապէ-Փռնիկի քաղքէն կախարդութիւն էին ըրեր, չորս հաս աներեւոյթ թո՛ւր էին կախեր դրան ճակտընոցէն՝ ձեկը ելնէր, ձեկը՝ իջնէր, մեր չորսիս վիզն ալ պիտի կտրէր..., անոր համար ես քեզի ը՛րի ուրի՛շ դուռ տուր բանալ՝ մտնենք ներս...:

Լէւօ՛ մինչեւ ձեջքն ի վար եղաւ քար...:

Թաղաւորի տղան ըսաւ, — Ա՛յ, Լէւօ՛, ըսաւ, ա՛լ մի՛ պատճեր. ա՛յցափ ալ մնաս՝ ձեզ հետ զրուցես հերիք է...:

Լէւօն ըսաւ, — Ո՞վ է տեսեր՝ մինչեւ ձեջքն ի վար քար ըլլայ՝ ձեջքէն վեր մա՛րդ ըլլայ..., —

— Ի՛նչք որ եկանք այստե՛ղ, ըսաւ, այս գիշեր՝ ես ինչո՞ւ մնացի այստեղ...: — Հապա՞, Պապէ-Փռնիկի քաղքէն կախարդութիւն էին ըրեր, պատը պատառա՛ւ վիշա՛պ ճ'ելաւ դուրս՝ որ ձեզ երկուքդ ալ պիտի կլլէ՛ր...: Ապա՞, ես ի՛նչ ըրի, — Թուրք քաշեցի՝ այն վիշապը բրդեցի, պուտ մ'արիւն թռաւ բու երես..., ես ալ մտածեցի՝ ինչո՞վ վերցընեմ քու երեսէն, — տեսայ որ քու խենջարը դեղ-թափ էր՝ կը վերցնէր արիւնը, ես ալ քու խենջարը քաշեցի՝ խենջարին ծայրովը այդ պուտ արիւնը պիտի վերցնէի՝ որ քու երեսը չաւրուէ՛ր..., դուն քու աչքերը բացիր՝ տեսար..., որ թէ չես հաստար՝ ահա՛ն վիշապին կոտորները — ըսաւ՝ լաթը տարաւ անդին...:

Լէւօ ամբողջովին եղաւ քար՝ ինկաւ այն տեղ...:

Թաղաւորի տղան առաւ լալ՝ Լէւօին վրայ... իր կնիկն ալ դարձաւ եղա՛ւ, ան ալ առաւ լա՛լ..., անոնց ձայնը գնաց Լէւօի կնկան, ան ալ սկսաւ լաց...:

Թաղաւորի տղի կնիկն ըսաւ, — Շահգաղէ՛, որ դուն չերթա՛ս ասոր դեղ մը գտնես բերես՝ ինձի հայր ու եղբա՛յր կենաս...:

Շահգաղէ՛ն էր..., ելաւ ձին հեծաւ գնաց..., շատ ու քիչ՝ Աստուած գիտէ ո՛րչափ գնաց..., գնաց այդ կապան՝ գիշեր դրաւ վրան՝ մնաց կապան, ելաւ այդ քարին տակ, ձին կապեց՝ նստաւ:

Քունը չի տանիր, նստեր կը մտածէ..., կես գիշերին տեսաւ որ այդ կապանին ձեջ՝ ձեկ լոյս մ'առաւ..., մարդը շա՛տ վախցաւ, քարին տակէն դուրս ելաւ, տեսաւ որ ձեկ մարդ մը կանգնէր է սարի ա՛յն գլուխը, ձեկը ա՛յն գլուխը...:

Սըբ Գէորգը հարցուց Սըբ Սարգիսին՝ ըսաւ, — Այդ ի՛նչ մարդ է՝ այդ քարին տակը...:

Ըսաւ, — Անիկ Արեւմտոց Թաղաւորի տղան է. Լէւօն եղեր է քա՛ր..., անիկ ելեր կ'երթայ աշխարհ՝ Լէւօնին դեղ բերէ՛ ժրեցնէ...:

Սըբ Գէորգն ըսաւ, — Սըբ Սարգիս, արդեօք անոր դեղ կա՞յ որ բերէ՛ զանի ժրեցնէ ըլլայ նախկին մարդը...:

Սըբ Սարգիսն ըսաւ, — Կա՛յ, բայց անոնք չեն գիտեր...:

Սըբ Գէորգն ըսաւ, — Ի՛նչ է անոր դեղը...:

Ըստ,— Անոր երկու-երեք ամսուան տղայ ծը կայ, բերէ այն քարին վրայ ծորթէ՛, արիւնը թափէ այն քարին (Լէւօի) վրայ... Լէւօն կը ժրի կ'ըլլայ առաջուան ծորդը (1)... Կհա անոր զեղն տ'ն է, անկէ աւելի զեղ-գարծան չկայ...:

Մնաց ծինչեւ լուսուն. թագաւորի տղան ելաւ ձին հեծաւ, ետ դարձաւ, եկաւ տուն, իր կնկանն ըսաւ,— Գնա՛, Լէւօի կնկան սի՛րտ տուր. ըսէ՛,— Մեր ծորդը զեղ է բերեր, ի՞նչ կը տրածիս...:

Այսպէս խաբեց կնիկը՝ զուրս հանեց. որ ի՛նչ է՛ կնիկը զրոյց (առարկութիւն) չընէ՛. Աստուած ընդունելի չընէ,— բերաւ՝ տղան օրօրոցէն քաշեց դո՛ւրս, բերաւ այդ Լէւօի քար-ղիակին վրայ զննեց, արիւնը թափաւ վրա՛ն, Աստու հրամանով քարը պատուաւ՝ Լէւօն ելաւ զուրս ճէջէն...:

Թագաւորի տղան այնտեղ շատ խնդալաւ, ուրախացաւ, ելաւ տղան զրաւ օրօրոցին ճէջ, զլուխը զրաւ իր տեղը, նորէն առաջուան պէս կապեց..., շատ խնդալաւ..., ձայնը գնաց այն ճէկալ սենեակը...:

Եռհզագի կնիկն ըսաւ, — Ետիկ ս՞վ է եկեր թագաւորի տղան քով՝ որ այդպէս կը խնդանայ (կ'ուրախանայ, կը հրճուի)... — ելաւ վազեց՝ տեսաւ որ Լէւօն եղեր է առաջուան նմանակ, այնտեղ նստե՛ր է...:

Թագաւորով կնիկը շատ բարկացաւ, ըսաւ, —

(1) Տեսնել խորենացի. Բ. ԶԳ. 337, Վեհեթիկ: (Զիբ.):

Որ դուն գիտէիր ասոր զեղը, ինչո՞ւ առաջին օրը, չըրիր, այսքան ատեն թողիր՝ մնաց քար...:

Թագաւորի տղան ըսաւ, — Յիբա՛ւի, ես անոր զեղը չէի գիտեր, անոր զեղն ա՛յդ էր, — աղան բերի վրան զննեցի՛, արիւնը թափաւ վրա՛ն..., անոր զեղը ա՛յդ էր...:

Ըսաւ,— Դուն շա՛տ գէշ ծորդ ես... Է՞ր դիտարեցիր՝ հանեցիր զուրս՝ նոր զննեցիր..., ապա՛՛ կ'ս ալ մնացի այստեղ, անոր ոտքերը բռնէի՛՝ դուն զննէիր, այն բարիքը բի՛չ բան ծը ինձի ալ հասնէր՝ ի՞նչ կ'ըլլար...:

Կնիկը այսձեւ բսելո՛ւն պէս՝ Աստու հրամանով տղան օրօրոցին ճէջ առաւ լաց՝ ողջցաւ...:

Թագաւորի տղան ըսաւ,— Ե՛լ գնա՛՛ ակընջկլայ տար Լէւօի կնկան, ըսէ՛՛՝ Իձ ծորդը զեղ բերաւ, Լէւօն ժրեր եղեր է առաջուան պէս...:

Լէւօի կնիկն եկաւ տեսաւ որ Լէւօ եղեր է առաջուան նմանակ..., ուրախացա՛ն խնդալաւ...:

Լուր գնաց թագաւորին, ետ' թն օր՝ ետ' թը զի-շեր հարսնիս ըրաւ, զանոնք պատկեցին իրարու վրայ..., անոնք հասան իրենց ծուրաղին, լսողն ալ հասնի իր ծուրաղին...:

Երկնուց երեք խնձոր իջաւ..., — ճէկն լսողաց, ճէկը լսողաց, ճէկն ալ ականջ արողաց...:

Կարկառի բարբառով գրի առաւ

ու աշխարհաբարի վերածեց

ՉԻԹՈՒՆԻ

Էրմօն—Փարիզ

Մարտ 1929